

ԱՆԱԾԻՏ

ՀԱՆՐԱՊԵՏ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1899

ԹԻԻ 7

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԼՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ

— 0 —

Ի՞նչ արդիւնքի պիտի յանգի Զէնընկեցու-
թեան Դեսպանաժողովը, որ պիտի սկսի մա-
յիս 18 ին, Զենք զիտեր : Յոռեհեաները,
խորամանկները, սկեպտիկները Զարին հրա-
ւէրին մէջ թաքուն մեքենայութեանց զսպա-
նակներ միայն կ'ուզեն նշմարել եւ հիմակուց
կը շտապեն պատգամն թէ այդ գումարումը ու-
րիշ բան պիտի չըլլայ բայց էթէ մեծազորոյ
փախստ մը : Բայց ժողովուրդները սկեպ-
տիկ չեն, — բարեբաղդաբար : Անոնք խոշոր
տղաքներ են, երեւակայութեամբ ու զգա-
յութեամբ ապրող. եւ անոնց համար իրողու-
թիւնները յաճախ կ'առնեն իմաստ մը՝ իրենց
հեղինակին ուղածէն շատ տարբեր : Ժողո-
վուրդները Զարին հրաւէրը ըմբռնեցին իրենց
պարզողական եղանակով, իրենց երազին եւ
կամքին մէջէն զանի աշխարհներին, ընդլայ-
նեցին, եւ Պատերազմին դէմ պատերազմի կոչ
մը նկատեցին ինչ որ խորամանկները դիւա-
նագիտական դադար մը ձեռք ձգելու միջոց մը
կը համարին ապագայ հսկայական բաղիւստին
աւելի ընդարձակօրէն պատրաստուելու համար :
Ժողովուրդներն են թիրեւս որ իրաւունք ունին,
եւ անկարելի չէ որ անոնց մեկնութիւնը յաղ-
թանակէ Տիտղոսն իսկ Համաժողովին— Զէնըն-
կեցութեան Համաժողով—, հիմնալի խեղա-
թիւրում մըն է որով ժողովուրդները ուզեցին
սպառադիմանց բարձունքն ու պատերազմին
ջնջումը նկատել ինչ որ պատերազմական

ծախքերու համեմատական նուազումն ու
պատերազմի գործիքներէ ոմանց վրայ
վէճ մը պիտի ըլլար լոկ : Եւ տեսէք, ա-
ռաջին քայլէն իսկ, ժողովուրդները յաղթա-
նակը տարին : Անոնց ստեղծած տիտղոսը, հա-
կառակ պաշտօնական հերքումներուն, տիրա-
կան դարձաւ, ըստ որ արձագանգներէն կըրկ-
նուեցաւ, ու մնաց : Եւ տիտղոս մը, — մա-
նաւանդ այսպիսի տիտղոս մը որ մարդկային
ամենէն ընդարձակ նշանակութիւնը ունի—
յափազանց կարեւոր տարր մըն է ինքնին :
Դէպքը որ պիտի տեղի ունենայ այդ տիտղո-
սին ներքեւ, անուշտ առժամայեւն պիտի
չհամապատասխանէ տիտղոսին . բայց տիտ-
ղոսը, խորհրդաւոր զօրութեան մը պէս՝ պիտի
սաւառնի Համաժողովին բոլոր գաւերուն ու
կնճիռներուն վրայ, ու ժողովուրդներուն
կամքը պիտի ներկայացնէ բանակցողներուն
նենգութեանն ու եսականութեանը վերեւ
կախուած : Ի՞նչ ալ ըլլայ Համաժողովին ար-
դիւնքը, սա իրողութիւնը միայն որ Զար
մը ձայն բարձրացուցած եղաւ այն ջախջա-
խիշ բեռնի դէմ զոր պատերազմի վախը կը
ծանրացնէ մարդկութեան ուսին, եւ հրաւէր
կարդաց մարդոց պատերաւն որ այդ բեռը թե-
թեցնելու միջոցները խորին, այդ իրո-
ղութիւնը միայն քայլ մըն է քաղաքակրթու-
թեան ճամբուն մէջ : Զարրատով աւելի բան ըրաւ
խաղաղութեան գործին յաջողմանը համար քան
մտածողներու բոլոր ստեղծութիւններն ու ընկեր-
վարականներու բոլոր ճառերը : Այլեւս յետին
հիւզակին մէջ, ամենէն խոնարհ ուղեղին
խորը, ուր պատերազմին անհրաժեշտութեան
զաղաքարը կը տիրէր տակաւին, մէկ հար-

ուսածով թափանցեց սա մասածովը թէ՛ Պատե-
րազովը չարիք մըն է , եւ թէ կարելի է զայն
բառնալ , քանի որ Զար մը , պատերազմի
զաղափարին պաշտօնական ներկայացուցիչնե-
րէն մէկը , այդպէս կը յայտարարէ : Զարին
հրաւէրը հօր ուղարկուիլէն մէկը եղած
պիտի ըլլայ որոնք մարդկային բարբարոսու-
թեան վրայէն կ'անցնին ու զայն կը հարթեն,
կ'ողորկեն : Լա Հէի ժողովը , ինչ արդիւնք
ալ տայ , ինչպէս ալ մնկնիլէն , քաղաքակըր-
թութեան ճիգ մըն է իր բնութեամբը :

Բերանաբաց լաւատեսութեան մը բարբա-
նաւորներ չեն ասոնք , Իրողութիւնները դե-
մացնին են , ու բաւ է որ զանոնք տեսնել ,
զանոնք հասկնալ դիտանալ : Պատերազմներու
հայտը մաքրելու համար տեղի ունեցած են
այս դարուն մէջ Համաժողովներ , որոնք կա-
րեւոր փոփոխութիւններ յառաջ բերած են
աշխարհի քարտէսին վրայ . բայց ոչ մէկ
Համաժողով այսքան ազմուկ յարուեցած , այս-
քան ժողովորդականութիւն գտած են առաջուց
այսքան վիճուած ու մնկնուած չէ որքան այս
Համաժողովը որ պիտի գումարուի՝ Պատերազ-
մին դէմ : Ու ամէն ինչ որ ըսուեցաւ ու զը-
րուեցաւ Զարին առջին հրաւէրէն ի վեր ,
հաստատում մըն է այն գաղափարին թէ ժո-
ղովուրդները Պատերազմին ջնջումը կը բաղ-
ձան : Բայց ի բրուսիական անաստիւն մէկ քանի
վարաջներէն որոնք Պատերազմին սրբապնու-
թեան , հարկաւորութեան եւ բարեբարու-
թեան մարդակերական վաղնջուց վարդապե-
տութիւնը յանդգնեցան խանչել , բոլոր ձա-
յները որ բարձրացան՝ մշտական խաղաղութեան
ի նպատակ բաղձանքներ արտայայտեցին : Եւ
եթէ ճշմարիտ է որ , խաղաղութեան Համա-
ժողովին անոնքապէս առաջ իսկ , մէկ քանի
կառավարութիւններ , — Գերմանիա , Անգլիա ,
Ամերիկա , եւ Նոյն ինքն Ռուսիա — իրենց
սպառազինութիւնները անձեցնելու շտապով
ըլ բռնկուին՝ արտառոց բայց չկրկնասկա-
նալի հակաառութեամբ մը , նոյնպիսի ճշմարիտ
է որ ժողովուրդները , իրենց ձգտումները ար-
տայայտող հաւաքական մարմիններուն , ինչ-
պէս եւ իրենց հողին թարգմանող մեծ ան-
համարժեք ձեռքով , ցուցանին թէ Նոյնիակ
կառավարութիւններուն կողմէ արուած այս
առիթիւն կարեւորութիւնը ըմբռնած են եւ
պիտի գիտնան կառավարողներուն քմայլին
դիմացը հանդիսաւորապէս բարձրացնել իրենց
կամքը , որ վաղուան օրէնքը պիտի ըլլայ :

Ինչ որ Բոլ Ատան կը տեսնար իր գեղեցիկ
յօդուածին մէջ , որուն թարգմանութիւնը կը
հրատարակէնք ստորեւ , պիտի կատարուի :
Աշխարհիս ամէն երկիրներէն , ամէն ազգե-
րէն , ամէն կուսակցութիւններէն եւ ամէն
գոտերէն շնորհակալութեան ուղերձները դըր-
կուեցան Զարին , ի պատասխան իր հրաւե-
րին : Կոմս Մուրավիեֆ , իր երրորդ չըջա-
բերականով , Զարին շնորհակալութիւնները կը
յայտնէր բովանդակ մարդկութեան կողմէ ի-
րեն եւ իր գաղափարին ցոյց տրուած այդ
փութկոտ ու ջերմագին խանդավառութեանը
համար Պ . Սթէյն , « Իմ խուզի Իմ խուզի տը-
նօրէնը , որուն դրոժակցութեան բաժինը Զարին
յղացանք մէջ՝ մասնաւոր ըրած էինք նա-
խորդ յօդուածով մը , կը շարունակէ իրա-
դրօնի իր ծրագիրը որով Զարին խոստացած
էր արեւմտեան Եւրոպայի հանրային կարծիքը
բոլորքել ի նպատակ խաղաղութեան . Անգ-
լիոյ մէջ իր միթիւնները ամենամեծ յաղո-
ւութիւնն ունեցան , հակառակ կառավարու-
թեան առջի բերան ցոյց տուած պաղ ու գրե-
թէ նեղնոտ վարմունքին . անգլիական հան-
րային կարծիքը կ'ազմակերպուեցաւ ու հուսկ
այսպէս ազգեց Նոյն իսկ պաշտօնական մարմիննե-
րուն վրայ . այն պատասխանը զոր Պ . Պալ-
ֆուր տուաւ Սոլզպերիի կողմէն Պ . Սթէյնի
նաղաղութեան պատգամաւորներուն որոնք
գացած էին կառավարութեան ձգտումները
հարցնել . Զարին առաջարկին ամբողջութեանը
համար — բայց ի մէկ քանի որոյ վերապահու-
մեք — շատ յարգալից եւ Նոյն իսկ հաւատա-
ւոր էր : Պ . Սթէյնի ստեղծած շարժումը Զը-
րանայի մէջ ալ փոխանցուեցաւ , ու մաքրե-
ր պատրաստ են այստեղ խաղաղապրական գոր-
ծին մասնակցելուն : Նոյն երեւոյթը տեղի
կ'ունենայ Իտալիոյ , Գերմանիոյ , Աւստրիոյ
հատարակութեանց մէջ , ինչպէս եւ Ամերիկա :
Մալիա Վիսին , Լա Հէի պաշտօնական համա-
ժողովին շուրջը , խաղաղասիրական ազատ հա-
մադրումար մը պիտի ձեւանայ՝ մարդկային
մտաւորականութեան ներկայացուցիչներէն
կազմուած : Միւսնոյն ատեն , ընկերավարա-
կաններու եւ անիշխանականներու երկու հա-
մաժողովը պիտի գումարուի Լա Հէի մէջ , Նոյն
ինքն ժողովուրդին , տառապող ու դժգոհ ժո-
ղովրդին բողոքն եւ իյծը անպատրուակ
յայտնելու համար կառավարական Համաժողո-
վին քովն ի վեր : Վերջապէս , ճնշուած ազ-
գերու , անիրաւուած երկիրներու , կեղեւ-

քրտած դատակարգեալու ձայնը , յիշատակաւ-
զերերով կամ պատգամաւորներով , պիտի
հասնին Լա Հէ , եւ պանծնոցէ բարձումը բոլոր
լուծեալուն , գոհացումը բոլոր արդար պահանջ-
ներուն , անհրաժեշտ պայման իրական խաղա-
ղութեան մը հաստատման :

Ինչ ալ ըլլայ Համաժողովին արդիւնքը ,
մարդկային ամէն դատակարգեալու եւ կուսակ-
ցութեանց այս մեծաշուք համաժմեմունքը՝ մեծ
գաղափարի մը յաղթանակին համար , իր գե-
ղեցեկութիւնը պիտի ունենայ , եւ գեղեցեկու-
թիւն մը ամուլէ չի կրնար մնալ : Ամէն գաղա-
փար նախ կը ներկայանայ իրարի մը ձեւով ,
յետոյ կը կազմակերպուի ու գեղեցեկութիւն
մը կ'ըլլայ ամենուէն մասնելի ու ցանկալի ,
մանչև որ տիեզերական ցանկութեան ու պա-
նծնոցին քորութեան տակ՝ մարմնաորով : Անոնք
որ կ'երեւակային թէ Զարին այս առաջարկը
միմիայն դիւանագիտական հաշիւ մըն է , իրենց
յոռեստեմութիւնը անձինք ծայրայեղութեան
մը տարակն կ'ըլլան . անուշտ , ուռւ դի-
ւանագիտական թարմաբոցն շրջանակները
նիւթապալա , գործնական , շահաղէտ աշ-
քով մը կը նկատեն խնդիրը , եւ անոր մէջ
կը տեսնեն իրենց քաղաքականութեան մաս-
նաւոր շահը , որուն համար իրօք , արդի կա-
ցութեան մէջ , մեծապէս հարկաւոր է զինա-
դադար մը եւ սպասադինմանց ծախքերու թե-
թեւացում մը . բայց Զարին առաջարկը այդ
հաշիւներէն չէ ծնած , ամէն անոնք որ—ինչ-
պէս Պ . Սթէտ , —տախթ ունեցած են մօտէն
ճանչնալ Նիգուլ Բ . ը , անոր մէջ գտած են
գաղափարապաշտ միտք մը , ֆրանսացի ի-
մաստաճնեմու ազդեցութեամբ կազմուած ,
Թալթոյի ներգործութիւնը կրած , Զարը , կը
հաստատէր Պ . Սթէտ , իր մտքին մէջ սաղմի
ձեւով ունէր արդէն խաղաղութեան ի նպաստ
նախաձեռնութիւն մը ստանձնելու մտածումը ,
եւ իր որոշումը տուաւ կարգալէ յետոյ Պիտքի
գիրքը , եւ տեսակցելէ յետոյ Պ . Սթէտի հետ
որ արեւմտեան Եւրոպայի համալրութիւնը ա-
պահովեց այդ ծրագրին համար , Ուրիմ Զարին
արարքը կը ծագի ոչ թէ հաշիւ մը , այլ իր-
գափարէ մը : Եւ Զարի մը կողմէն այսպիսի
գաղափարի մը ընդգրկումը մեր ժամանակին

մեծ նշաններէն մէկն է : Այդ գաղափարին իրա-
կանացման առաջին քայլը առնել անձնապէս
առաջարկելով , Զարը դրական հողի վրայ դրաւ
գաղափարը որ մինչեւ հիմա ցնորք մը կը նկա-
տուէր կամ հեռաւոր իտեղալ մը , եւ նպաստեց
որ անոր իրականացումը փութացուի : Այդ
իրականացումը թիէ չսխախաչ Համաժողովին ,
պիտի չուշանայ կատարուած իրողութիւնը
դառնալու : Կը բաւէ որ մարդկութիւնը Հա-
մաժողովին մէջ մեծագոյ ու յստակ կերպով
բարձրացնէ իր ձայնը ի նպաստ ինչպաղու-
թեան . եւ ատոր համար պէտք է որ լուա-
տեսները եւ խաղաղամոտները աւելի քաղմամբ ի-
ըլլան քան տարակուսողները , պէտք է որ
մարդկութիւնը քացէ իրաց յայտնէ իր կամքը
եւ իր հաւատքը , եւ այդ բարոյական ուժին
առջեւ ոչ մէկ զէնք , ոչ մէկ հաշիւ կրնայ կանգուն
մնալ : Այս Համաժողովը ճամբու դարձք մըն
է՝ պատմութեան մէջ : Մարդկային մտքին
նոր մէկ ուղղութեան տիրապետման սկզբը-
նաւորութիւնն է :

Մտքի այս նոր փոփոխութիւնն է այն
եղանակին որով մարդկութիւնը հիմա կ'ըմբռնէ
«հեռու» : Հերոսը , այսինքն գերագոյն մարդը
տիպար-մարդը , հին աշխարհին մէջ , եւ դեռ մին-
չեւ երէկ այն մարդն էր որ ամենեւեւ աւելի ճա-
տար էր եւ յանդուգն՝ սպաննելու արուեստին
մէջ . կեանքի պայքարը կը հիմնուէր մարդ-
կային արեւելի վրայ . քաղաքակրթութիւնը
կ'ընթանար մարդագոհնրու տիւրցով . եւ կը
կարծուէր իսկ թէ կեանքին անխղիւ մէկ օրէքն
էր ատիկա : Բանաստեղծները որ մայրերուն՝
բողոքը թարգմանեցին , մտածողները որ
մարդկային անհատին իրաւունքը հաստատե-
ցին եւ մարդագոհնրուն խուժողուժ անխառնու-
թիւնը մամանիւ ըրին , արդէն քաղաքացիին
այն սրբազնացուցիչ լուսապսակը որով Պա-
տերազը կ'երեւար մեր հայրերուն՝ գեղեցիկ
ու հրապուրելի Պատերազը ի յայտ եկաւ իբրեւ
զէմբով , իբր արեւալիք մը , իբր աղէտը
մը , իբրեւ մարդուն նախապատմական կիսա-
նախային կեանքին մէկ միացորդ . բայց
դեռ համոզուողներ կային թէ այդ Աղէտը
անխուսափելի , ճակատագրական եւ անհրա-
ժեշտ ուժն էր կեանքին բնաշարքի թեան համար .
եւ կատալարողները իրենց շահուն համաձայն
կը զանէին այդ վարդապետութեան վրայ
կրթնել , թէ՛ իրենց ժողովուրդները զսեպ-
լու եւ թէ՛ միջազգային մրցումին մէջ
յաղթանակը ձեռք բերելու համար : Գիտու-

թիւերն եւ վաճառականութիւնը , իրենց արդի տարապայման զարգացումովը , մահացու հաւրուածը տուին այդ բարբարոս վարդապետութեան , եւ մարդկային մտքին այս կազմուիլ սկսող նոր վիճակին հաստատութիւնն մը եւ զօրութիւն մը փոխանցեցին որ վաղը զայն տիրական եւ մշտական վիճակը պիտի դարձնէ : Գիտութիւնը , իր շոգիւղին ու ելեգորականութեամբը , ազգերու միջեւ յարաբերութիւնները ընդլայնեց , սահմանազուխները կտրեց եւ քաղաքակրթիթ աշխարհը կապակից մարմին մը դարձուց , փողովուրդներուն այս անմիջական ու շարունակական համահարգողութիւնը հին մոլեռանդութիւնները մեղմեց , եւ ստեղծեց «մարդկային» խտիւղ մը , եւ «մարդկային» չափեր , եւ ատուք արդէն պատերազմի դրութեան ջնջումը պատրաստող իրողութիւններէն : Միւս կողմէ , Գիտութիւնը , պատերազմի մարդոց մատակարարելով ջնջումի գործիքներ հետզհետէ աւելի զարուրեւիլ , ատուղ խակ առաւանդի խաղ մը խաղացած եղաւ Պատերազմին , եւ անոր ծառայել թուած ատենը , զայն սպաննեց . այսօր երկու մեծ ազգերու միջեւ պատերազմը , շնորհիւ Գիտութեան ստեղծած միջոցներուն , միլիոնաւոր մարդոց փնացումը պիտի յառաջ բերէր եւ երկու երկիրներուն հիմնական լաւնդումը , այս հաշիւն է որ ռուս հեղինակը , Պլիոք , կատարած է ապագայ պատերազմին վրայ իր գործին մէջ , որուն ընթերցումը Ձարը իր որոշմանը միող զէպերէն մէկը եղաւ . Պլիոք մայթեմաթիկական եղանակով մը ապացուցած է որ եթէ սպառազինմանց ամման եւ կատարելաւ գործման այս դրութիւնը շարունակէ , պատերազմը անհնարին պիտի դառնայ երկու մեծ ազգերու միջեւ , որովհետեւ այդ պատերազմը բացարձակ սպառումը , փնացումը պիտի ըլլայր երկու ազգին ալ համար , ու ո՛չ մէկ աղգ պիտի յանձն առնէ : այդ յիմարական գոհողութիւնը : Վաճառականութիւնը , որ Գիտութեան բացած ճամբուն մէջ եւ անոր շնորհիւ , գտաւ իր արդի տարածումը , շարունակեց ու ընդլայնեց Գիտութեան սկսած բարոյական պայքարը ընդդէմ Պատերազմին . Վաճառականութիւնը , որ երկրագնդին բոլոր ազգերը ամենին սերտ հաղորդակցութեան մէջ կը գնէ , այսօր գլխաւոր լծակը դարձած է քաղաքակրթութեան . մեծ ազգերուն միջեւ զանուած վէճերը , յառաջ կուգան այն եռանդէն զոր իւրաքանչիւրը կը ցուցնէ իր երկրին արտադրութեանց համար կարելի եղածին չափ ընդարձակ վաճառանոցներ

ունենալու . մեծ ազգերը կ'ուզեն իւրացնել բոլոր տրամադրելի երկիրները որոնք նախնական կիսավայրենի կազմակերպութեան մը մէջ մնացած են , ինչպէս Ափրիկէն , Խաղաղականի կղզիները , եւ կազմաւորւածու ու վերինք կառավարելու անկարող երկիրները ինչպէս Չինաստան , Տաճկաստան . վաղը , այդ բոլորը Վաճառականութեան զայտը պիտի դառնայ եւրոպամերիկեան ազգերուն . քաղաքակրթութեան համաշխարհային տարածումն է որ կը սկսի աւտով , ու ընդհանուր մարդկութեան ներդաշնակումը՝ մէկ քանի քաղաքակրթական մեծ վարիչ ուժերու ներքեւ , որոնք են անգլո-սաքսոն , ռուս , գերման , լատին ուժերը : Վէճը բաժանման չափին ու համեմատութեանց վրայ էր կայանայ , եւ Վաճառականութիւնը որ իր ընտ. թիւամբ խաղաղեցուցիչ տարր մըն է գերազանցապէս եւ խաղաղութեամբ միայն կրնայ յաղթիլ , խաղաղութեան մէջ միայն զարգանալ , չի կրնար թոյլ տալ որ իր շահերը պատերազմով լուծուին , որովհետեւ Վաճառականութեան տարածումը նպատակ ունեցող պատերազմ մը երկու ազգերու միջեւ , Վաճառականութեան փնացումը կրնայ յառաջ բերիլ . եւ Վաճառականութիւնը որ այսօր դեւանադիտական գործունէութեան հիմնարկն է , պիտի արգիլէ որ այդ աղետաւոր ձեռնարկը իրականանայ : Կեանքի պայքարը պիտի շարունակուի բայց զէնքերը պիտի փոխուին . թրւա դանձիւն , հրացաններ , պայթուցիկներուն՝ բարոյական զէնքեր պիտի յաղորդեն . մրցում մին մէջ պիտի յաջողին անոնք որ աւելի հաւրուատ են գիտութեամբ , աւելի ճարտար , աւելի հնարամիտ , աւելի աշխատող , աւելի շարժուն . Անդլիան , որ այն երկիրն է որուն լեզուն , ազգեցութիւնը եւ վաճառականութիւնը երկրագնդիս վրայ ամենէն աւելի տարածուած են , այդ բարոյական զէնքերուն կը պատի գլխաւորաբար իր գիրքը . Անգլիա պատկերացուց ար երկաթուղիներն ու վաճառականական նաւերը շատ աւելի բեղուն միջոցներ են ազգի մը տարածման ու մեծացման համար քան պարզապէս զէնքով նուաճումը : Այսուհետեւ պատերազմի գործիքները միայն պիտի գործածուին , եւ այն ալ մինչեւ որով ժամանակ մը , քաղաքաքակրթական մեծ մարմիններուն կցելու համար նախնական երկիրները եւ փոսած երկիրները , որպէսզի փակ ճւղայն չմնայ , անապահով ու վայրենի անկուրն մը չլինայ մարդկային գոր-

ծուռեութեան առջեւ . այսպէս . անդլիսական բանակը Ափրիկէի կիսափայտընեները ստիպեց , զէնքով , եւրոպական մտքին առջեւ խոնարհելու , եւ կարելի դարձուց որ Աղեքսանդրիայէն մինչեւ Բաբելոնաց Գլուխ անգլիական երկաթուղին առանց խոչընդոտի յառաջանայ . այսպէս , Ամերիկա , զէնքով , ազատեց Գուպան սպանական բարբարոսութենէն . այսպէս , Եւրոպա , զէնքով , փրկեց կըրէտէն թուրքին մահացուցիչ ազդեցութենէն . այդ բոլոր երկիրները հիմա կենանք , չարժման , քաղաքակրթութեան նոր բոցին պիտի դառնան եւ ահա Չինաստանը , ինչոյ իսկ առանց զէնքի դիմուելու , անձնատուր կ'ըլլայ եւրոպական քաղաքակրթութեան ծաւալմանը . Ռուսիա իր անդրեմպեւերիականով կը յառաջանայ դէպ ի անոր սիրտը , եւ վաղը Չինաստանին վարիչ ուժը պիտի դառնայ . Անգլիա , Յոստոնա , Գերմանիա իրենց ազդեցութեան ուրոյն շրջանակն ունին այնտեղ , եւ խնդիրը այդ մրցակիցներուն միջեւ համաձայնութեան մը անհրաժեշտութիւնն է :

Ինչպէս պիտի յառաջ գայ համաձայնութիւնը , Յոստոնները կը մոման թէ առանց եւրոպական խոշոր պատերազմի մը անհնար է այդ մեծ բաժանմանը որոշումը :

Բայց արդէն կը տեսնենք որ այս վերջին օրերուս մէջ ազգերը ամէն ջանք կը թափեն խնդիրները առանց պատերազմի լուծելու : Համաժողովէն առաջ իսկ , օրինակները տրուեցան բանակցութեամբ խնդիրները լուծելու : Խորշիւով պատերազմի հրէշուար միջոցին դէմսէ , Յոստոնա տուա քառային օրինակը , Պ. Տէլքասէ արգիլեց որ տեղի ուննայ պատերազմը որ վայրկեան մը անխուսափելի չարձած էր Անգլիոյ ու Յոստոնայի միջեւ . բանակցութեաննիւով երկու երկիրները լուծեցին իրենց վէճը . Անգլիան ունեցաւ իր երկաթուղին Աղեքսանդրիայէն մինչեւ Գաբ , ու Յոստոնա ունեցաւ Թունուզէն ու Ալճէրիայէն մինչեւ Ֆրանսական Գոնկոն միաձոյլ անպիրն պետութիւն մը :

Վերջին պահուն , Սամոայի խնդրոյն մէջ , Գերմանացիք եւ Ամերիկայիք կը նախընտրեն համաձայնութեան մը յանդիլ քան պատերազմի դիմել : Եւ նոյն իսկ ծայրագոյն Արեւելքի մէջ , երկու մեծագոյն մրցակիցները , Անգլիա եւ Ռուսիա , կը թուին համաձայնութեան մը հասնիլ : Երկուսն էլ կարծին թէ ստիպար մըն է սպասելու համար որ վաղը Ռու-

սիա , իր երկաթուղին աւարտելով , Անգլիոյ դէմ ցցուի եւ զայն վանիլ սպառնայ Չինաստանէն ու նոյն իսկ Հնդկաստանէն Ո՞վ կրնայ պնդել թէ յոռտեսներուն այդ գուշակութիւնը անխուսափելի իրողութիւն մըն է . Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ այդպիսի բաղխում մը օդեթեւութային աղէտքի մը ծանրութիւնը կրնայ ունենալ երկու աղբերուն ու երկրպագուիչի համար . ո՞վ կրնայ ապահովցնել թէ վաղը պիտի գտնուին դիւանագէտներ այնքան ճիշատապէս վիթխարի պատասխանատուութիւնը . դիւանագէտները մարդկութեան ամբողջութեանէն անշատ ու տարբեր էակներ չեն . մարդկային արեւնի հեղման դէմ արդէ մարդկութեան զգուշանքը անձեց այւրեղյն մէջ փոխանցուիլ սկսած է , եւ վաղը այլեւս անհնարին պիտի դառնայ որ դիւանագէտ մը իր հաշիւներուն համար հազարեւոր անհատներու ջնջումը հրաժարէ : Պատերազմը մօտ է իր մահաւանը . խընդիրը կը մնայ գոնեալ թէ ի՛նչպէս պիտի կառարարի այդ մահը : Կա՞մ ժողովքներով ու դաշնակցութեամբ պիտի կատարուի ան , կա՞մ նոյն իսկ պատերազմով մը . եթէ , զժբաղդ պատահականութեամբ մը , գլուխները բռնկին եւ Անգլիոյ ու Ռուսիոյ միջեւ բաղխումը տեղի ունենայ , այդ դէպքը այնպիսի պակաս ցանդակաւ համեմատութիւններ պիտի առնէ որ ապահովապէս վերջին պատերազմը պիտի ըլլայ եւ Պատերազմին վախճանը :

Մարդկային գիտակից խումբերէն ունշանակելու անհատականութիւններէն կախումով է որ այդ աղէտը չպատահի : Պէտք է որ ժողովուրդները իրենց ատելութիւնը յայտնեն , առաւել ուժգին քան երբեք , Պատերազմին դէմ : Պէտք է որ Գիտութիւնը եւ վաճառականութիւնը իր անապիտուկութեան հանդէպ կանգնին խրոխտ ու անվերապահ եւ արգիլեն Չարիքը :

Իսկ չէի Համաժողովը մեծ առիթ մը պիտի ըլլայ , Պէտք է որ մարդկութիւնը հոն իր բաղձանքը լսելի ընէ , վարդուցներուն հաշիւներուն հանդէպ :

Տրուած ըլլալով արդէ ձգտուած կացութիւնը , մէկ քանի հրատապ խնդիրներու դրուածութիւնը , եւրոպական ազդերու կտակածներն ու վախերը , անհատականապէս է որ սպառազինմանը թիթեւացման եւ զէնքերու տեսակներուն պարտաւորիչ որոշման առաջարկը ընդունուի : Բայց իրաւարարութեան միջնադ-

գալին դրութիւն մը անկարելի չէ որ իրականացում գտնէ : Մարդկութիւնը ցանկալու է որ այդ ինչորէր լուծուի Համաժողովին մէջ : Իրաւարարութեան միջնագլխին մարմնոյ մը հաստատումը Պատերազմին բարձումը կը նշանակէ : Եւ այդ ուղղութեամբ ինչ քայլ ալ որ կարենայ առնել չա՛հէի Համաժողովը , մարդկութեան համար բարիք մը պիտի ըլլայ :

Բոլոր ժողովուրդներուն մէջ որիքնց իղձը պիտի հասցնեն այդ Համաժողովին , մենք Հայերս պարտինք մեր ձայնը լսելի ընել , խորիւս ու ազնիւ շնչով մը , իմաստակ ու ստախոս յոխորտանքները , կործանումի ու խառնակութեան սպառնալիքները , մեր ցեղին պատմական դերին գէ՛մ հայհոյանքներ պիտի ըլլային : Ուրիշ բան չունինք ըսելու բայց թէ՛ մենք ինչն էի վեր եղած ենք ցեղ մը խաղաղութեան , ցեղ մը քաղաքակրթութեան , ցեղ մը կենսաքի եւ արտաքրթութեան , թէ՛ մենք եւրոպական մտքին յառաջապահ գունդն ենք Փոքր-Սսիոյ մէջ , եւ թէ՛ մեր իրաւունքն ու Եւրոպայի պարտքն է , տիեզերական շահերուն յաղթանակին համար , որ մեր վրայ ծանրացող անբանական , անճշմարտանայ , հակամարդկային բարբարոսութիւնը ջնջուի , որպէսզի մենք կարողանանք կատարել , խաղաղութեան եւ ազատութեան մէջ , քաղաքակրթողի գործը որ մեր գործն է :

ԱՐՇԱԿ ՉՊՊԼԵՆԵՆ



ԱՏԵՂՈՒԹԵԱՆ ՈՂԵՒԱՐԸ

Եթէ Հապէշներուն զինեալ շարժումները ճամբուն գծուածքը չկտրեն , Բարեկրտոյ Գլուխէն մինչեւ Գահիրէ բրիտանական երկաթուղին պիտի չուշանայ բանելու : Հիւսիսէն մինչեւ հարաւ՝ գիտութեան այդ ուժին անցնելով , բերտ Սփրիկէն պիտի քաղաքակրթութիւն , քիչ տարիէն պիտի ծածկուի արտերով եւ գործարաններով : Նոր դիւրակեցութիւն մը պիտի տարածուի մարդկային ազգին վրայ որ , հողին արտադրութեանց բազմապատկումով , աւելի աժան պիտի սնանի ,

հագուի ու զուարճանայ : Քիչ ատենէն միեւնոյն բարերար գործը պիտի կատարէ Ասիոյ մէջ անդրապերական երկաթուղին , որ , մեքենական արագութեան միակ թափով մը , պիտի կապէ Բորթ-Արթուր քաղաքն ու Մանչուրիան՝ Մոսկուա , Բեթերսպուրկ , Պերսին , Բարիզ , Պառիս քաղաքներուն : Հին ցամաքերիկը իր ցեղերուն միութիւնը գտած պիտի ըլլայ իրենց բարորութիւնը ստեղծելու հաւաքական գործին մէջ : Պառիս եւ Վլատիվոթք երկու ծայրերը պիտի ըլլան բազմագոյն ժապաւէնին որ պիտի խորհրդապատկերէ ազգային զինանշաններ ժողովուրդներուն ուրոնց մէջ քաղաքացան միտնիքական Գաղղէստտանին մայր կրօնքները , յետոյ յոյն-լատին պաղափարը որ բովանդակ աշխարհ իր արգարութեանը օրէնքներուն եւ իր արուեստներուն խաչալին հետեւող դարձուց :

Ահաասիկ ամբողջ փառքը տաճնեկներորդ դարուն : Չկարենք թէ՛ ան կը պատկանի պատերազմներու յաղթութեանց կամ մարդկային մեծ կոտորածներու փողանշմանց : Գլուխ չծռնեք անոնց որ ազգերու մէջ ատելութիւն կը քաղոցն , որ կը ջնհան հակառակորդութեանց բարբարոսութիւնը պատպանել , որ մեզ կը կուրացնեն հին զրօշակներուն աբիւնոս գոյները խաղցնելով :

Ընդհուպ , անդրապերական վակոնին միեւնոյն բաղորդական վրայ , պիտի եղալայանան քրիստոնեան եւ պոտոսյականը , հրէան եւ մանմետականը , ամենքն ալ նմանօրինակ հեռագրով մը մտադրաղ՝ Ու Յանկ-Յէի ուազանին մէջ հանքային արժէթղթերուն բարձրացումը պիտի ծանուցանէ իրենց : Երկրագործական սենտիքաներու մետաղագործական զաշակցութեանց գլխադրական (commanditaire) դրամատուները ինմեւու համար , Պրամս , Մովսէս , Յիսուս եւ Մուհամմէտ պիտի միացնեն իրենց դրամադրութեանը : Ապահովագրութեան եւ գործակցութեան շնորհիւ ամբարպետած , դրամադրութեան աշխատութեան խմբակները , արտադրութեան գործերուն ցուցակին վրայ հաւասար դօրութեամբ մը պիտի ներկայանան : Ահա կուգան Եղբայրները : Եղէոկ եւ Պոլինիկ արդէն կը գիրկնդիւսանուին : Չժպոխնք , զուրկակեցատութեամբ չարերուն եւ վատերուն : Վերջին երկու շարժումն մէջ , Յունաստան , Ամերիկա եւ ալյուր , մեծ հարուստներ մեռան : Փոխանակ հարստութեանց ամբողջութիւնը աւ-